

ՎՐԱՑԵՐԵՆ ԱՐՁԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Պատմական Հայաստանում պահպանվել են բավական մեծ քանակությամբ վրացերեն արձանագրություններ, որոնց ուսումնասիրությունը հայ-վրացական բանասիրության համար առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում: Դրանք պահպանվել են Հայաստանի այն դավառներում, որոնք շրփման մերձավոր եզրեր են ունեցել վրաց իրականության հետ, մեծ մասամբ վերաբերելով XI—XIII դարերին: Դատելով արձանագրությունների բովանդակությունից, կարելի է եզրակացնել, որ շինարարական-նվիրատվական շարժառիթներով վիճադրվածները Զաքարյան շրջանի հայ-վրացական միացյալ թագավորության ուղղակի արձագանքն են:

Արձանագրությունների մյուս մասը կապվում է այսպես կոչված ծախ-հայոց հոգևոր գործունեության հետ, երբ որոշ վանքեր ու միաբանություններ հարեցին Բյուզանդիայից ու Վրաստանից Հայաստան թափանցող և տարբեր ժամանակներում փոփոխակի հաջողություն ունեցող քաղկեղոնականությանը: Վերջիններիս գործունեությունը առանձին դավառներում տարբեր ավարտ ունեցավ: Տայքում ու Կղարջքում քաղկեղոնականությունը ճանապարհ հարթեց նշանակալի ապագգայնացման համար, մինչդեռ Տաշիրում դավանաբանական անհամաձայնությունը նման հետևանք չունեցավ: Քաղկեղոնական Սիմեոն Պղնձահանեցին, օրինակ, վրացերենից հայերեն էր թարգմանում հայասիրական ազնիվ դրդմամբ՝ զի մի պակաս եղիցի սա յագգէս մերմէ: Արձանագրությունների մյուս մասը տապանագրեր է, որ նորից պակաս հետաքրքրություն չի ներկայացնում:

Հայաստանում առկա վրացական արձանագրությունները, իրենց գոյացման շարժառիթով ու աղբյուրադիտական նշանակությամբ, չի կարելի նույնացնել հարևան ժողովուրդների տերիտորիայում պահպանված հայկական արձանագրությունների հետ: Հայաստանից դուրս գտնվող մեր արձանագրությունները հիմնականում կապվում են հայկական բնակավայրերի գոյության փաստին, այդ թվում և՛ Վրաստանում եղածների մեծ մասը՝ Սամշվիլի, Շավնաբադ-Թելիթ-Սավկիսի, Ալի, Գարեջա, Դմանիսի, Թմոզվի և այլն: Մինչդեռ Հայաստանի վրացական արձանագրությունները, ինչպես նշվեց, աննշան բացառությամբ, կապվում են դավանանքի ու տերիտորիալ-պետական ենթակայության հետ: Այդ պատճառով էլ վերջիններս ամենից առաջ հետաքրքիր են հայադիտությանը՝ իրենց աղբյուրադիտական արժեքով, և ապա՝ վրացադիտությանն ու հայ-վրացական բանասիրությանը:

Բանասերները Հայաստանի վրացական արձանագրությունների ուսումնասիրությամբ սկսել են դրադվել դեռևս ավելի քան հարյուր տարի առաջ: 1843—1853 թվականների տասնամյա շրջագայությունների ժամանակ երախտավոր բանասեր ներսես Սարգսյանը արտասովոր համբերությամբ ու լուսանկարչական մանրակրկիտությամբ ընդօրինակել է պատմական Հայաստան-

նում գտնված տասնյակ վրացական արձանագրություններ. «Մեծաւ խնամով և հաւատարմութեամբ գաղափարեալ են և այլալեզու արձանագիրք ոմանք, յոյն, արաբիկ կամ թուրք և մանաւանդ վրացի՝, որքան ներէր անծանօթի նոցին ճշգրտել գտիպան. յորոց մասն ինչ ջանամբ ըստ նմին գաղափարաց վիճազրել, գիտնոց և հմտից լեզուացն թողեալ զստուղիլն և դմնացեալսն»¹: Ն. Սարգսյանի հրատարակությունը բացառիկ արժեք է ներկայացնում ոչ միայն իր բարեխիղճ ընդօրինակմամբ ու նկարագրմամբ, մանավանդ վրացերեն շիմացող գիտնականի կողմից, այլև նրանով, որ այդ արձանագրություններն իրենց գտնված տեղով այսօր հասու չեն հետամուտ մասնագետներին: Նկատելու է նաև, որ այստեղ նկարագրված «որոշ հուշարձաններ այլևս քիչ թե շատ մխիթարական այն վիճակում չեն, ինչպես եղել են սրանից հարյուր տարի առաջ: Ամայությունն ու օտար միջավայրը, անկասկած, արագացրել են շատ արձանագրությունների ու հուշարձանների աստիճանական կործանումը: Ահա նշյալ պատճառով էլ հայ-վրացական բանասիրությունը առանձնահատուկ երախտագիտությամբ պիտի հիշի այս «տասնամեայ քրտանց և ոչ սակաւ տառապանաց» կրողին: Ն. Սարգսյանն իր ընդօրինակած վրացերեն արձանագրությունները ի վերծանություն ու թարգմանություն տվել է նշանավոր հայագետ-վրացագետ Մ. Բրոսեին և նոր գետեղել «Տեղագրության» մեջ: Բնականաբար, Հայաստանի վրացական արձանագրություններով զբաղված հաջորդ գիտնականը աւագ. Մ. Բրոսեն է: Տարբեր առիթներով ու շափերով մեզ հետաքրքրող խնդրով զբաղվել են Ն. Մառը, Հ. Օրբելին, Իվ. Զավախիշվիլին, Ա. Շանիձեն, Ե. Թաղայշվիլին, Լ. Մելիքսեթ-Բեկը, Ս. Նրեմյանը, Վ. Դոնդուան և ուրիշներ: Նշյալ գիտնականների ուսումնասիրություններն ու հրապարակումները թեև չեն ամփոփում վրացական արձանագրությունները մեծ մասով, այնուամենայնիվ հիմք են պատրաստում վերջիններիս լիակատար դիվան-ժողովածու կազմելուն: Հայաստանում կան բավական քանակությամբ տակավին չհրապարակված վրացերեն արձանագրություններ, որոնց ի մի հավաքումն ու վերծանությունը կնպաստի նրանց բազմակողմանի արժեքավորմանը: Միայն այս դեպքում կբացահայտվի նրանց աղբյուրագիտական կշիռն ու հայագիտական կարևորությունը: Պակաս կարևոր չէ նաև այդ արձանագրությունների լեզվաօճական քննությունը: Պարզվում է, որ նրանցում կան վրաց լեզվի պատմությանը վերաբերող հետաքրքիր իրողություններ, բարբառային այնպիսի ձևեր, որոնք գուտ վրացական միջավայրում հազիվ թե այդպիսի ցայտունությամբ լացահայտվեին: Նշանակում է՝ վրացագիտության համար նրանք երկակի հետաքրքրություն են ներկայացնում՝ պատմական-աղբյուրագիտական և լեզվաբանական: Այդ ամենի դրդմամբ էլ ձեռնամուխ ենք եղել Հայաստանում պահպանված վրացերեն արձանագրությունների լիակատար հավաքմանն ու վերծանությանը, պարզորոշ գիտակցելով դրա հետ կապված դժվարությունները:

Ստորս ներկայացվում են մի քանի պատառիկներ այդ արձանագրություններից, որոնց աղբյուրագիտական-ժամանակագրական արժեքավորումը կրտրվի համահավաք տեքստերի հիմամբ դրվող տեսության մեջ:

1. Հնեվանք

Հնեվանքի կառուցման ժամանակի ու շարժառիթների մասին տակավին որևէ ստույգ տեղեկություն հայտնի չէ: Անցողակի դիտվում է միայն, որ

¹ Ն ե ռ ս է ս Ս ա Ր գ ի ս ե ա ն, Տեղագրությունք ի Փոքր և ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, նախագիտելիք (ընդգծումը՝ Պ. Մ.):

վանքը հունական է կամ վրացական, որովհետև արձանագրությունները գրված են վրացերեն, իսկ դավթի հարավային ճակատին հունական ոճի եռահարկ խաչ է պատկերված: Ինքնին հասկանալի է, որ վանքի հիմնարկությունն ու ազգային պատկանելիությունը որոշելու համար այսքանը բավարար չէ: Նույն հաջողությամբ այն կարող է համարվել հունադավան կամ վրացադավան (— երկաբնակ) հայոց պատկանող վանք, մանավանդ որ պատմական այս շրջանի համար միակը չէ: Նշված հարցերը չէին կարող քննության լուրջ առարկա դառնալ, որովհետև, որքան մեզ հայտնի է, այստեղ պահպանված վրացական արձանագրությունները գեոևս ուսումնասիրված ու հրատարակված չեն²:

Հնեվանքը այժմ գտնվում է անհամեմատ ավելի կործանված վիճակում, քան անցյալ դարի վերջերին կամ XX դարի սկզբներին է եղել, երբ նկարագրվել է Իս. Հարությունյանի³ և ապա՝ Ե. Լալայանի⁴ կողմից: Տասնամյակներ առաջ, ինչպես տողերիս հեղինակին պատմել են որոշ կուրթանցիներ, վանքը հիմնովին ավերելու փորձ է արվել, որի հետևանքով խիստ վնասվել է, իսկ ճակատի շատ սրբատաշ քարեր տարվել են շինարարության մեջ օգտագործելու Այդ պատճառով էլ անհրաժեշտ ենք համարում մեջբերել մինչ այն եղած նկարագրությունները: Իս. Հարությունյանի մոտ կարդում ենք. «...Մենք էլ մոտ երկու ժամ հանգստանալուց հետո՝ ժամի 4-ին ճանապարհ ընկանք և կես ժամ գնալուց հետո բարձրացանք այն փոքրիկ բլուրը, որի վրա շինված է Ձնէվանք կոչված ավերակ եկեղեցին: Նստալով սկսեցինք մեր դիտողություններն անել և դաստիարակի ցուցումները դրի անցնել: Սրբատաշ քարից շինված եկեղեցու արտաքին ձևը չէ զանազանվում հայոց եկեղեցիների ձևից, բացի գմբեթից, որ տարբեր է: Եկեղեցու շենքն անսյուն է և կաթողիկեն կանգնած է չորս խաչաձև կտրող կամարների վրա. նման է Սանահնա սբ. Գրիգոր եկեղեցուն: Արևելքից և հարավից ունի երկխորան դավիթներ՝ սրբատաշ սև քարից շինված. հարավային դավթում կա նաև պատարագամատույց սեղան: Խորաններն առանց դռների են և բացվում են եկեղեցու մեջ երկու սյունադարձ կամարներով: Եկեղեցու կաթողիկեի և հարավային խորանի ճակատին կան հունարեն և հին վրացերեն (խուցուրի) տառերով արձանագրություններ, այդ վերջին արձանագրության ճակատին քանդակված է հունական խաչ: Եկեղեցու ձևից և արձանագրություններից կարելի է ենթադրել, որ վանքը նախ հունական է եղել, իսկ հետո վրաց տիրապետության ժամանակ ընկել է վրաց ձևերի: Վանքի արևելյան կողմը գտնվում է մի քառակյունի մեծ շինություն, որի տանիքն ավերված է, իսկ որմերը շինված են ոչ սրբատաշ քարից. ի նկատի ունենալով շենքի անկանոն լուսամուտները և ոչ սրբ-

2 Պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկը 1928 թվականին նշում է, որ 1926 թ. ամռանը եղել է Հնեվանքում և դիտարշավի նյութերը պատրաստում է տպագրության (տե՛ս նրա „Ինճոջու ծննդեթա նոճեթա ծոճոջաճո“, էջ 34, հմմ. նույնի Օб экспедиции в Мори-Ташир и по ущелью р. Машавери летом 1926 г., «Известия Кавказского историко-археологического института», т. IV, стр. 135—136). Սակայն, որքան մեզ հայտնի է, այդ նյութերը դեռևս հրատարակված չեն (ըստ Լ. Մելիքսեթ-Բեկի տպագիր աշխատությունների 1960 թ. հրատարակված լիակատար մատենագիտության):

3 Իս. Հարությունյան, Աշակերտի հուշատետրը, «Լույս», 1897, էջ 233—234:

4 Ե. Լալայան, Բորչալուի դավառ, «Ազգագրական հանդես», 1901, էջ 436:

Կուրթանում պատմվում է նաև, թե վանքում ապաստանած ալլազգի հոգեվորականները «կակալ են կոտրել» անցորդ հայերի գլխին: Եթե այս ավանդության մեջ որևէ ճշմարտություն կա, ապա վանքի անունը հնարավոր է առնչել «հէն» բառին, որովհետև ալլազեն հոգևորականին այսպես որակելու օրինակ հայտնի է: Բացառված չէ, որ այստեղ ևս նման որակման հետ գործ ունենանք: Մի խոսքով, ինչպես որ վանքի հիմնարկության ժամանակն ու պարագաները, այնպես էլ անվան ստուգաբանությունը դեռևս մնում է ուսումնասիրության կարգու: Մինչդեռ Հնէ-ի Ձնէ զանազանությունը, մեր կարծիքով, վրիպման արդյունք պետք է լինի (Հ—Ձ), որ տեղի է ունեցել Իս. Հարությունյանի գրառությունը հրապարակելիս⁹:

Վանքի երկրորդ նկարագրությունը հրապարակվել է 1901 թ. «Ճարտարապետական տեսակետից այս բավական նշանավոր վանքը բարձրանում է Կուրթանի ձորում, Պալըղ-չայ գետի աջ կողմում, մի եռանկյունաձև բարձրության վրա: ...Արևմտյան կողմից կից բարձրանում է սյունազարդ գավիթը, երեք փոքրիկ գմբեթով, որոնք այժմ բոլորովին քանդված են: Գավթի հարավային, կամարակապ դռան վերև կա վրաց խուցուրի տառերով մի արձանագրություն, որ չկարողացա ընդօրինակել:

...Գրականության մեջ այս վանքի մասին տեղեկություններ չկարողացա գտնել, գուցե բոլորովին չկան: Հայ ժողովուրդը Հնէվան ասելով բացատրում է իբր Հոսնաց վանք»¹⁰:

Ինչպես երևում է, Ե. Լալայանի աչքից վրիպել է գմբեթի (կաթուղիկեի) վրացերեն արձանագրությունը: Իս. Հարությունյանի նկարագրությունն ավելի մանրամասն է: Բայց վերջինիս մոտ էլ հունարեն արձանագրություն է վկայվում, որ, սակայն, մեզ չհաջողվեց գտնել: Հնարավոր է, այն գտնվելիս է եղել այժմյան փլատակված մասում: Ե. Լալայանի հիշած արևմտյան «սյունազարդ գավիթը» այժմ միայն հիմնապատերով է նկատվում, իսկ արևելքից գավիթ չունի, որի գոյության մասին Իս. Հարությունյանն է խոսում, գոնե այժմ չկա: Հավանաբար վերոնշյալ այցելությունների ժամանակ վանքի արևմտյան պատն արդեն խարխված է եղել, այդ պատճառով էլ նրա տակ մնացած և ստորև վերժանվող վրացական շորս տապանագրերը չեն հիշատակվել: Հողի ու քարակույտի մասնակի տեղափոխությունից հետո տապանաքարերը տեսանելի են դարձել:

Ե. Լալայանի բնորոշմամբ «Ճարտարապետական տեսակետից այս բավական նշանավոր վանքը» ուսումնասիրության առարկա կարող է դառնալ վերևում նշված արձանագրությունների վերծանումից հետո միայն: Նկատենք, սակայն, որ այն հետաքրքիր է նաև հայ-վրացական պատմական-մշակութային փոխհարաբերությունների առումով, մանավանդ եթե հաջողվի ճշտել այստեղի միաբանության ազգային պատկանելիությունն ու հնարավոր գրական վաստակը: Ներկա դեպքում մեր հիմնական նպատակը արձանագրությունների վերծանումն ու հրապարակումն է՝ դրա հետ կապված բանասիրական աշխատանքի կատարմամբ: Արձանագրությունների աղբյուրագիտական արժեքավորմանն ու նրանցում հիշատակվող դեմքերին, ինչպես ասվեց, կանդրադառ-

⁹ Մենք փորձեցինք Ձնէ-ի տակ որևէ վրացական բառի (ծցլո) աղավաղում կամ համապատասխանություն գտնել, բայց անարդյունք եղավ: Սանահնի XIII դ. արձանագրություններում մի քանի անգամ հանդիպում ենք Ձնէլան և տոհմանլանը, բայց այն չենք կարող առնչել Ձնէ-ին:

¹⁰ Ե. Լալայան, Բորչալուի գավառ, «Աղագրական հանդես», 7—8, 1901, էջ 436:

(վասն փրկության հոգու?) և ի ուրախություն մեր (արենակցաց?) ու ծնողաց և ամենայն մեր գալիք սերնդոց՝ (եկող?) սերնդից-սերունդ: [Մայր?] աստծո, ողորմացի [fn] ծառային: Քրոնիկոն՝ 364 (-1144):

Արձանագրությունը, ինչպես նշվեց, գտնվում է զմբեթի վրա, այդ պատճառով էլ վերծանությունը կապված է որոշ տեխնիկական դժվարությունների հետ: Տեղում ավելի երկար աշխատելու դեպքում, համոզված ենք, հնարավոր կլինի ճշտել բոլոր շվերծանված ու կասկածելի բառերը: Այնուամենայնիվ, Սմբատ անձնանվան շնորհիվ կարելի է հավաստել արձանագրության գրության ժամանակն ու աղբյուրագիտական նշանակությունը: Ստ. Օրբելյանի «Պատմությունից» գիտենք, որ վրաց Դավիթ Շինարարի օրոք սպասալար իվանե Օրբելյանը «յոյժ արիացեալ ընդարձակեցոյց զսահմանն վրաց՝ պատերազմեալ ընդ Տաճկաստան, զի առին զՏփղիս ի տաճիկէն և զՏաուուշ, զԳագ, զՏերունականն, զԼաւոէ և զԱնի ի 572 թվականին» (էջ 379): Ի վարձատրություն՝ իվանե Օրբելյանն ստանում է «Լաւոէ իւր զաւառովն» (անդ): Նշանակում է 1123 թվականից սկսած Լոռի ամրոցն ու ողջ գավառը պատկանում էր Օրբելյաններին: Քանի որ 1178 թվականին Օրբելյանները հալածական եղան և «բնաջինջ կործանեցաւ տունն Օրբելեանց» (Ստ. Օրբ. էջ 383, թվականն ուղղում ենք ըստ Դավիթ Քոբայրեցու հիշատակարանի, հրատ. Վ. Հակոբյանի), ուրեմն մեր արձանագրության մեջ խոսվում է իվանեի որդի Սմբատ ամիրսպասալարի մասին: Վերջինս Լոռի-Տաշիրի տեր ու վրաց ամիրսպասալար դարձավ հոր մահից՝ 1128 թվականից հետո, և վախճանվեց «ծերացեալ աւուրբք»՝ 1158 թվականից առաջ, որովհետև վրաց Դեմետրե թագավորը իր որդի Դեմնային պատվիրում է Սմբատի որդի իվանե Օրբելյանին: Ուրեմն՝ Սմբատ Օրբելյանը Հնեվանքի վերանորոգումը կատարած պետք է լինի 1130—1150-ական թվականների արանքում: Քանի որ արձանագրության մեջ պահպանված քրոնիկոնի երկրորդ մասն ավելի լավ է կարդացվում (սլո)՝ ուրեմն խոսքը վերաբերում է 1144 թվականին: Սմբատ սպասալարը հիշատակված է նաև Սանահնի մի արձանագրության մեջ. «Ի թագաւորութեան վրաց Գէորգէի, ես՝ Օրբելեան Իւանէ սպասալարս, թողն մեծին Իւանէ սպասալարին եւ որդի Սմբատայ սպասալարին, ըստ նախնեաց սովորութեան եկի ուխտ Սանահն սուրբ Աստուածածնիս, ուխտիս առաջնորդ էր Տուտէ որդի Գրիգոր եպիսկոպոսն, տեսի զյիշատակս նախնեաց մերոց, որ մեր ամենայն դաւառքն՝ թէ քաղաք եւ թէ գիւղք, ազատօք եւ շինականօք յերանելի թագաւորաց եւ ի նախնեաց մերոց վախմ էր տւած սուրբ Աստուածածնիս...»¹¹: Զալալյանի մոտ (այստեղից էլ՝ Կ. Կոստանյանցի ու Կ. Ղաֆաղարյանի աշխատություններում) արձանագրությունը թվագրած է ՈԼԹ (=1183), իսկ Հարությունյանի դիտողության մեջ՝ ՈԼԷ (1188): Ինչպես պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկն է նկատել¹², այստեղ գործ ունենք սխալ ընթերցման կամ վրիպյալ փորագրության հետ. 1178 թվականին Օրբելյանները հալածվեցին և 1183 թվականին այլևս սպասալարություն անել չէին կարող, մինչ այդ վրաց սպասալար էր նշանակվել Սարգիս Երկայնաբաղուկը, ուրեմն՝ ՈԼԷ-ի փոխարեն պիտի ունենանք՝ ՈԻԹ (=1173): Մասնավոր հետաքրքրություն են

¹¹ Կ. Ղաֆաղարյան, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957, էջ 189: Ընդօրինակված է Զալալյանի վերծանությունից:

¹² Տե՛ս նրա «Ինքնակողմնական մեթոդը...», ԵՊՀ, 1928, թ. 35, թիվ 4.

ներկայացնում վերոբերյալ արձանագրության «ըստ նախնեաց սովորութեան եկի ուխտ Սանահին սուրբ Աստուածածնիս», «տեսի զյիշատակս նախնեաց մերոց» արտահայտությունները: Կարհիլի է ենթադրել, թե Օրբելյանները միարժեք դավանության են պատկանել (՝) դեռ մինչև Սյունիքում բնակվելը: Այս առումով ուշագրավ է նաև Ստ. Օրբելյանի հաղորդումը, որ ասվում է. «Եւ ծանիր, զի սոքա (Օրբելեանք — Պ. Մ.) խնամութեամբ խառնեալ էին ընդ թագաւորին վրաց և ընդ թագաւորին հայոց Կիրիկեանց, որք էին Բագրատունիք. վասն այնր պատճառի առին ի նոցանէ զԲագրատունի անուանսն, այսինքն զՍմբատն և զԻւանէն, որ է Յովհաննէս, և զԼիպարիտն և զՆիկիոմն և զԲորթէլն ունին ի հին նախնեացն որ ի Ճենաց եկին. և զայլ անուանսն ի վրաց առին» (Ստ. Օրբ., էջ 379—380):

Հնեվանքի վրացերեն արձանագրությունը Օրբելյանների Լուի-Տաշիրում կատարած շինարարության եզակի հիշատակարաններից է և չափազանց կարե-
վոր:

Բ. Գաղթի կամարակապ դռան վերևի արձանագրություն: Գրված է հինգ երկար տողերով, սակայն տողերի սկզբի և վերջին մասերը, յուրաքանչյուրը մետրից աճելի երկարության, թրվել են և այժմ անդառնալիորեն կորած են: Տեղ-տեղ պահպանվել են առանձին տառահանքեր, որոնք, սակայն, որևէ ամբողջական վերծանում չեն բնօրինակում: Արձանագրությունը կիսովում է բարձր և եռահարկ հունական խաչով, կատարելապես անվնաս պահպանված:

[illegible]

....დ(ი)ს(ა)თა, ს(უ)ლ(ი)სა წ(მიდი)სთ(ა)სა, მ(ეო)ხ(ე)ბ(ი)თა ლ(მრ-
თი)სმშ(ო)ბლის[ათა]....თა, მ(ეო)ხ(ე)ბ(ი)თა წ(მიდა)თა წ(ინას)წ(არმე)-
ტყ(უელ)თა მ(ო)ც(ი)ქ(ულ)თა, მლ(უ)დ(ე)(ლ)თ.... [ა]ლგ(ა)შ(ე)ნე კ(არ-
ი)სბჟე ესე პ(ირველა)დ დლ(ე)გრძ(ელ)ოზ(ი)ს.... თუხ(უ)ც(ე)ს(ი)ს(ა)-
თ(უი)ს მჟ(ა)რგრძ(ელ)თ(ა)თ(უი)ს, ს(ა)ლ(ო)ც(ე)ლ(ა)დ თ(ევდო)რ(ე)
მ(ა)მ....

Թարգմանություն.

...[Անվամբ հոր և] որդու [և] սուրբ հոգու, Բարեխոսությամբ աստվածամոր ...ի, Բարեխոսությամբ սրբոց մարգարեից առաջնեց. Բահանայա[պետ]... Կառուցեցի սույն զավիթը սկզբնաբար [ի] արեշատություն... (Մսախոր)թուխուգես Երկայնաբազուկի, ի աղոթս Թեոդորե (= Թեոդորոս) ճայր[ապետի]...

Արձանագրության քրոնիկոնը չի պահպանվել: Այն կարելի է վերականգնել օժանդակ ճանապարհով: Երկայնաբազուկի տիտղոսը ներկայացնող բառից մնացել է միայն երկրորդ մասը՝ [] թուխուցես, ուրեմն ջնջված մասում պետք է ունենայինք՝ [մեծուրջի]թուխուցես [մատիուր]թուխուցես, [Սախլ]թուխուցես և այլն: Բայց սրանք արքունական տարբեր պաշտոններ են, որոնցից

Ճիշտը այն է, որը կրել է Երկայնաբազուկներից մեկը: Հայկական աղբյուրներից գիտենք (Կ. Գանձակեցի, Վարդան, Ստ. Օրբելյան), որ Երկայնաբազուկներից Իվանեն վրացադավանությունն ընդունեց և ամեն կերպ նպաստեց քաղկեդոնական վանքերի հիմնադրմանը Լոռում: Հայտնի է, որ նա Պղնձահանքի ս. Աստվածածին եկեղեցին «առեալ ի հայոց» վրացադավան դարձրեց: Նշանակում է Հենկանքի գավթի արձանագրության մեջ ամենայն հավանականությամբ նրան է արևշատություն հիշվում: Միաժամանակ «Քարթլիս ցխովրեբայի» „ისტორიადი ღა აზმადი შარავნადრეთადი“ հատվածից տեղեկանում ենք, որ Թամարի օրոք «ողորմացին ու Սարգսի որդի Իվանէին առաջին անգամ մսախուրթ-ուխուցեսություն շնորհեցին»¹³: Ուրեմն արձանագրության մեջ պիտի ունենանք—«ვანე მსახურ-სახუცესი»¹⁴: Իրոք էլ, արձանագրության տեքստում պահպանվել է վրաց կաթողիկոսի հիշատակությունը՝ «ի աղոթս Թ(ևողոր)ե հայր[ապետի]», իսկ Թեոդորեն (II) վրաց կաթողիկոս էր 1186—1206 թվականներին: Ուրեմն՝ արձանագրությունը գրված է Իվանե Երկայնաբազուկի կենդանության (մահ. 1229), մինչև նրա աթաբեկ դառնալը, և Թեոդորե կաթողիկոսի քահանայապետության օրոք, 1186—1206 թվականների արանքում:

Կարելի է ենթադրել, որ Հենկանքը նախապես, մինչև հարավային դավթի կառուցումը, միաբնակ հայոց է պատկանել և Իվանեի օրոք (ավելի ճիշտ՝ նրա իսկ կողմից) դարձել քաղկեդոնական, ինչպես Պղնձահանքի հետ է կատարվել: Արձանագրությունից եզրակացնում ենք նաև, որ վրացադավան եկեղեցիները Մցխեթի կաթողիկոսությանն են ենթարկվել, այլապես Թեոդորեի ժամանակ չէր հիշվի այստեղ:

Գ. Տապանագրեր Հենկանքի արևմտյան պատի տակ:

767
 ԵԹՆԴԴ: ԺԺԵԾ:
 ԵԿԾ: ԲԳՆՁԿՆ
 ԾՆԵ: ԺԴԵԺ: ԿԲ ՈԲ:

ցեց ե(ս)ղլ(ս)ցի մ(ս)մ(ո)նա ե(ս)ձա ե(ս)տողլաձս ժոն(ս)ձ, Յ(ցլլնրո)ն
 ր(մցրտձ)ն.

Թարգմանություն.

Այս [է] տապան հայր Սարայի, Նարուլայի (=Մկրտչայի) սրղու, ողորմի
 աստված^{14ա}:

¹³ Ժորտլոն Ենոցրձա, Ե. II, տձ., 1959, ձլ. 54, հմմ. 60, 14 67, 70, 81, 71

¹⁴ Մսախուրթ-ուխուցեսի ինստիտուտի մասին տե՛ս ոց. ՋաջանիՅցոլո, Ժորտ-
 Ենոցրլո, ոնԵ, Ե. II, 1, ձլ. 183:

^{14ա} Նաթուլայի որդու իխ. կարելի է կարդալ՝ Նաթուլաձն:

Ք ՂՆԴ ՆՓՆԴԴ:
 'Լ: ԹԹԹԻՆ:ԹԹԵ
 ԹԹԴՆ: ՄԻ՝ ՈԿ

Եսե Ն(ա)ղլ(ա)ցի Գ(ուրգ)ի մ(ա)մ(ամ)տ(աջ)ր(ո)ն, մտ(աջր)իս մ(ա)միս.
 Մ(եղնդ)ն Լ(մերտմա)ն.

Թարգմանություն.

Այս [է] տապան Գեուրգի (=Գեուրգ) վանահոր, գլխավոր վանականի, ողորմի աստված:

Ք ՂՆԴ ՆՇ
 ՓՆԴԴ
 ՂՆԿԼԹԹ
 ՆԱ ԿՆԸ
 ԿՄԴՆ
 ԺՆԱ ՄԻ

Եսե Նաղլ(ա)ցի Ո(ու)ն(ե)ծ մ(ա)մ(ո)ն(ա)ձ, Կ(ա)լոն(ա)ձեց(?) Ժ(ո)ն(ա)ձ.
 Մ(եղնդ)ն.

Թարգմանություն.

Այս [է] տապան հայր Իոսեփի (=Հովսեփի), Կալոնապեի (') ուղու, ողորմի [աստված]:

Մանրություն. Կալոնապե անձնանունը կարգում ենք վերապահությամբ՝ Կլոնապե հապավման պատճառով: Անձնանունն այդ հապավմամբ այլ աղբյուրից մեզ ծանոթ չէ¹⁵:

ՂՆԴ: ՆՓՆԴԴ:
 ԿՎԻՆԴ: ԹԹՆՇ:
 ԿՆԸԿՇՄՆ ԺՆԱ

Եսե Ն(ա)ղլ(ա)ցի Կ(ուր)ո(ու)ղլ մ(ա)մ(ո)ն(ա), Կ(ա)լոնաձեց Ժ(ո)ն(ա)ձ.

Թարգմանություն.

Այս [է] տապան հայր Կուրիլի (= Կյուրեղ), Կալոնապեի ուղու:

¹⁵ Հունական ծագում ունի՝ καλον, թե՛ καλιοπη (?):

Ծանոթություն. Ի տարբերություն նախորդ տապանագրի Կլոնակ հապավման, այստեղ ունենք՝ Կլոնակ, սակայն ոնա-ն դրված է միաձույլ, այդ պատճառով կարելի է կարդալ նաև՝ ոնա՝ Կալոնակ: Նման ընթերցումը բացառում ենք նախորդ տապանագրի հիմամբ:

2. Ս ա ն ա հ ի ն

Թեև պրոֆ. Կ. Ղաֆադարյանը իր «Սանահնի վանքը և նրա արձանագրությունները» արժեքավոր մենագրության մեջ գրում է, թե «այժմ արձանագրություն հրատարակողից պահանջվում է. 1. Հավաքել բոլոր արձանագրություններն անխտիր, առանց որևէ գիր իսկ բաց թողնելու, որպեսզի օգտագործողը վստահ լինի, որ տեղում դրանից ավելի բան չկա»¹⁶ և նշում է, որ այդ սկզբունքով է առաջնորդվել ինքը, այնուամենայնիվ մի երկու արձանագրություն (տապանագիր) վրիպել է նրա ուշադրությունից: Զաքարյանների տոհմական հանգրստարանում¹⁷ կան միաժամանակ հայերեն և վրացերեն գրված տապանագրեր, որոնց բաց թողնելու մասին վերոնշյալ ուսումնասիրության մեջ ոչինչ չի ասվում: Իհարկե, այդ տապանագրերը որևէ բացառիկ արժեք չեն ներկայացնում, բայց հետաքրքիր են իրենց երկլեզվայնությամբ, և, անշուշտ, անձնավորությունների ու նրանց պաշտոն-տիտղոսների հիշատակմամբ: Ստորեքերում ենք այդ տապանագրերը, անհրաժեշտ համարելով վրացերեն լեզվով դրվածը («մխեդրուլի» գրչությամբ) վերաթարգմանել հայերենի, որովհետև այն առկա հայերենի բառացի համապատասխանությունը չէ:

Ա. Դիֆ հանգստեան Սաղոմոնի Երկայնաձեռն, Մեծ իշխան ի տոհմ[է] Արդուքեանց, սոյն մինբաշի եւ սավետնիկ Կալեժսկի, որ ութն ամեայ գոյգ ընդ Բառասնի կոչէ գնա տէր՝ յոյսն ամենի, թիվ վաղհանի 1816, փետր. 3:

Վրացերեն՝

ხედავი ესე არს თავადი მინბაში, კოლეჟსკის სოვეტნიკი სოლომონ არუეთინცკი (resp. არყუთინცკი)—დოღლორუკოვისა. ასაკათ ვიყავ 48 წლისა; ვინაიდან უეპმოთ განვედ სოფლითგან,—გებრალებოდეთ და შენდობას მიბრძაბედეთ. აღვასრულდი წელსა ჩყივ, თებერვლის 3.

Թարգմանություն.

Այս է տապան թավադ (իշխան) մինբաշի (հագարապետ), Կոլեժսկի սովետնիկ (կոլեգիական խորհրդական) Սաղոմոն Արդուքինցկի-Դուգուրուկովի (Արդուքյան-Երկայնաբազուկի): Հասակով 48 տարեկան էի: Քանզի անժամանակ հեռացա աշխարհից՝ գթացեմ և ողորմի ասեմ: Վախճանվեցի 1816 թվին փետրվարի 3:

Ծանոթություն.

- 1) Հայերեն տապանագիրը կարելի է տողատել:
- 2) Հրատարակում ենք առանց տողերի քանակը պահելու:
- 3) Մասնավոր հետաքրքրություն է ներկայացնում անձնանունների համեմատությունը՝ Սաղոմոն—Սոլոմոն, սավետնիկ—Սոვეտնիկ. հայերենում պահպանված է ուսական արտասանության կնիքը:

¹⁶ Կ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., էջ 71:

¹⁷ Կառուցված 1189 թ. (ժաքարէ և Իւանէ, որդիք Միծին Սարգսի, շինեցաք գհանգըստարանս, յիշեցէք ի Քսս):

4) Տապանագրի հայերեն մասի «Երկայնաձևին»-ը (փխ. երկայնաբազուկ) ուսուցիչն Долгорукий-ի բառացի թարգմանությունն է՝ վրացերեն Ձնաղջուղ-ն ևս երկայնաբազուկ-ի ստույգ համապատասխանությունը չէ։ Տարիներ առաջ հանգուցյալ պրոֆ. Լ. Մելիքսեթ-Քեկր առաջարկում էր երկայնաբազուկ կամ Զաքարյանների փոխարեն այս տոհմը կոչել Վահրամյան՝ Վահրամի անունով։ Ի դեպ, պատմական գիտությունների դոկտոր Յ. Յինցաձեն իր «Քեյմուրագ Առաջին» հոդվածում («Լուծ. Տաթարաղաթ. 1963, 20 ըջ.»), ինչպես ասում են՝ գրչի մի հարվածով երկայնաբազուկներին «սերումով վրացիներ» է հայտարարել, այստեղից բխող մի քանի այլ թյուր հարցապնդումներով։ Երկայնաբազուկների ազգային պատկանելությանն ու ծագումնաբանությանը անդրադարձել են անվանի բանասերներ Մ. Բրոսեն, Մ. Օրմանյանը, Ղ. Ալիշանը, Աս. Շահնազարյանը, Կ. Տեր-Մկրտչյանը, Իվ. Զավախիշվիլին, Ս. Կակաբաձեն, Լ. Մելիքսեթ-Քեկր և այլք։ Այնուամենայնիվ, նրանցից ոչ մեկը առանց աղբյուրների հարց չի լուծել։ Յ. Յինցաձեն նույնիսկ հին վրացերեն մի նախադասություն է վկայակոչում՝ ի հաստատումն իր դրույթի «մաջրամ Տաջուլուտա Տոմեթ Ուցնեթ» («սակայն հայ էին հավատով»)։ Թեև չի նշվում, թե որտեղից է այս քաղվածքը, այնուամենայնիվ կարծում ենք, որ այն կատարված է «Քաղաքացիաց պատմականն ու ներքողյանը» երկից։ Իրականում՝ ա) նշված երկում առկույն տողը ոչ թե բնագիր է, այլ ընդմիջարկություն, որ պարզ նշված է Ս. Ղաուխիշվիլու կողմից (Ճ. Ս. 33, ծան. 2)։ Քաղված է Բարսեղ Արքունի վարդապետի աշխատությունից։ Բ) Յ. Յինցաձենի վկայակոչությունից այնպես է երևում, կարծես թե դրանից առաջ խոսվում է երկայնաբազուկների ազգային պատկանելության մասին։ Մինչդեռ բնագրում, այլ բան է ասված. «Այս Զաքարիան և Իվանեն՝ որդիք երկայնաբազուկի, թեև Քաղաքացիաց հանգեպ հավատարիմ էին և մեծապես փորձված արշավանքներում, անվանի մարդիկ, բայց հավատով հայ էին։ Սույն Իվանեն՝ իրոց արտակարգ գիտակ էր, այդ պատճառով էլ ընկալեց իր հավատի ոչ իրավացի լինելը։ Մկրտչեց և դարձավ իսկական քրիստոնյա»։ Ինչպես տեսնում ենք, այստեղ վրացագրի լինելու մասին չի խոսվում. այլև՝ ընդհակառակը։ Գ) Յ. Յինցաձենի վկայակոչությունը հարմարեցված է կանխակալ հարցադրմանը։ Հին վրացերենում մաջրամ Տաջուլուտա Տոմեթ Ուցնեթ չի կարող լինել։ Թեև մաջրամ-ը նոր վրացերեն բառ է, հին վրացերենում կլիներ զարնա կամ ձրամեջ։ Ժիշտը վերջինն է և բնագրում էլ այն է գործածված։

5) Սողոմոն երկայնաբազուկի մասին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Հովհան Խրեայանը (Յալմաստ, Թ. 1, 1936, հմմ. Պ. Մուրադյան, Սայաթ-Նովան ըստ վրացական աղբ., էջ 91—92)։

Բ. Մատիւր ով աննն (? ով անցնի) ի սոյն տեսարան, տես զի ննչէ Շիօշ Մեծ իշխան Սալոմոնեան երկայնաբազուկ, հօրն ժառանգ սիրելի յ[ա]տ[ո]ւկ, գոլ քսան եւ ուրն ամեաց երբալ, առ տէր մեծ յուսով փութայ, քիւ վախճանի 18 21 նոյեմբերի 19։

Վրացերեն՝

Մե, Տաթալու քնիաՅ Միօմ, Կոլոյիսիս ռեղիստրատորի, ժի Տոլոմոն արքայունցի—ժոլոլորայուցիս, Վիպա 28 Մլիս, Միթալոման Տիգեդիլման Ելմեթա. Զեքեդրեթի Մեդեթա միծրժանօտ, Մլեսա Խչ Կա Նոյեմբերիս, իտ.

Թարգմանություն.

Ես, հանգուցյալ իշխան Շիօշ, կոլեծսկի ռեգիստրատոր (կոլեգիական ատենապետ), որդի Սողոմոն Արդուրինցկի-Պուգուրուկուի (Արդուրյան-Երկայնաբազուկի), 28 տարեկան էի. անցուր մահը իսկեց ինձ։ Աղաչում եմ ողորմի ասեմ, Բիվն 1819, 21 նոյեմբերի։

XIII դարի կեսերից սկսած երկայնաբազուկների ու նրանց տոհմական հյուղավորումների պետական-պաշտոնական ազդեցությունը թուլանում է։

XVIII դարում Արղությաններին հաջողվում է ապացուցել, որ իրենք Երկայնաբազուկների տոհմի շառավիղն են: Պահպանվել է Հերակլ 2-րդ թագավորի վրացերեն հրովարտակը, որով Արղությանները ճանաչվում են իշխանական տոհմ՝ իբրև Երկայնաբազուկների ժառանգներ¹⁸: Ահա այդ պատճառով էլ XVIII—XIX դարերի Արղության տոհմի տապանազրեբում հատկապես շեշտվում է նրանց Երկայնաբազուկ լինելը: Վերջիններիս հիշված տապանատունը չէր կարող ամփոփել բոլոր հանգուցյալներին¹⁹, ուստի ուշ շրջանի ներկայացուցիչները թաղված են վանքի նախագավթում (Մեծ գավիթ) և այլուր: Ափսոսանքով պիտի նշել, որ պրոֆ. Կ. Ղաֆադարյանի հրատարակությունից դուրս են մնացել ոչ քիչ թվով տապանազրեր, այդ թվում և Արղությաններին-Երկայնաբազուկներին վերաբերողը: Թեև նրանց վերծանումն ու հրատարակումը մեր նպատակից դուրս է, այնուամենայնիվ ստորև բերում ենք մեկը, որ չափածո է²⁰ և մեզ համար ուշագրավ Քալի²¹ անձնանվամբ.

Դուստր իշխանի
Եւ կին իշխանի,
Յադգէ Արղութեանց,
Անուանեալ Քալի:

Մտի ես ի վանս
Սրբո Սանահնի՝
Թողեալ դայս աշխարհ,
Որ է զըզուելի:

Զքեզ ունիմ ինձ յոյս,
Փրկիչ աշխարհի,
Որ քաւես զմեզս
Փեսայդ պանծալի:

Սանահնի վանքում են գտնվում, իբրև թանգարանային առարկա, Կողբից տեղափոխված ճարտարապետական բեկորներ, որոնցից մի քանիսը վրացական արձանագրության պատառիկներ են կրում: Այդ պատառիկները մեր կողմից վերծանվել են, բայց կհրապարակվեն Կողբի արձանագրությունների հետ, որտեղից բերված են:

¹⁸ SL'v Л. Меликсет-Бек. Сигель грузинского царя Ираклия II о князях Аргутинских, Хр. Вост., т. VI, вып. III, стр. 341—343.

¹⁹ 1229 թվականին վախճանված Իվանին, Կ. Գանձակեցու վկայությամբ, «թաղեցին զնա ի Պղնձահանքն, զոր իւր շինեալ էր վանս վրաց առեալ ի հայոց», իսկ 1250 թվականին՝ նրա որդի Աւագը «թաղեցաւ ի Պղնձահանքն ի գերեզմանի հօր իւրոյ Իւանէի» (տե՛ս Կ. Գանձակեցի, Պատմություն հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 238—321):

²⁰ Մեր համոզմամբ, առանձին ուսումնասիրության են արժանի հայկական չափածո հիշատակարան-հիշատակագրություններն ու արձանագրություն-տապանազրերը, որոնք առանձնանում են իրենց բովանդակությամբ ու աղբյուրագիտական արժեքով: Լատինական չափածո արձանագրություններն, օրինակ, վաղուց են այդպիսի ուշադրության արժանացել (տե՛ս Carmina latina epigraphica. Conlegit Franciscus Buecheler. I—III, Lipsiae, 1895—1926, նաև՝ Փ. Ա. Петровски й, Латинские эпиграфические стихотворения, М., 1962):

²¹ Քալի անձնանունը հայոց մեջ գործածվել է XI—XII դարերից սկսած, նշանավոր է Քալի Բակուրյանը՝ հայտնի բյուզանդական աղբյուրից:

3. Հ ա ո Ր ա տ

Վերևում նշեցինք, որ վրացական արձանագրություններ հիմնականում պահպանվել են այն վանքերում ու մենաստաններում, ուր քաղկեզոնականությունը երբևէ նշանակալի ազդեցություն է ունեցել: Այս դեպքում խոսքը վերաբերում է ոչ ուշ շրջանի տապանագրերին, ինչպիսիք կան Սանահնում և մի հատ էլ Հաղբատում: Տոհմական հանգստարանի տապանագրերը քիչ են առնչվում տվյալ միաբանության դավանանքին:

Հյուսիսային Հայաստանի վանքերի մեծ մասը XI—XIII դարերում կատարելապես մերժում էր եկեղեցական միության հնարավորությունը և Կիլիկյան հայ գործիչներին մեղադրում հանդուրժողականության մեջ: «Վարդապետը հայոց հիսուսային կողմանց» դպրոցի գործունեությունը դժվարացնում էր վրացադավան կամ հունադավան քարոզիչների տարածումը²²: Այնուամենայնիվ, պատմական մի շարք հանդամանքների պատճառով (մանավանդ 1204/5 թվականների լուռու և Անիի ժողովներից հետո), քաղկեզոնականությունը թափանցում էր առանձին վանքեր ու միաբանություններ: Պղնձահանքի, Քոբայրի ու Հնեվանքի գոյությունը, թամարյան շրջանի հայ-վրացական ընդհանուր թափվորության պարագան և այլն, ուղի էր հարթում երկաբնակության համար, որքան էլ հյուսիսային վարդապետները շարունակեին պաշտպանել ավանդական միաբնակությունը: Այժմյան Ալավերդու, Ստեփանավանի և Նոյեմբերյանի շրջանների տեղանուններն ու կենդանի խոսվածքն ուսումնասիրելիս տակավին նկատելի է պատմական այդ ժամանակաշրջանի կնիքը: Այսպես, օրինակ, Արարատյան բարբառի լուռու խոսվածքում մեր կողմից գրավել են 50-ից ավելի վրացաբանություններ, որոնք թեև զուտ միջնադարյան չեն, այսուհանդերձ ինքնին կարևոր փաստեր են: Տեղանուններից մասնավոր ուշադրության են արժանի՝ Ծաթեր (գյուղ), Հոռոմայր (վանք), Ամոջ (գյուղ), Հնեվանք (վանք), Քոբայր (վանք և կայարան) և այլն: Այս հարցերին անհրաժեշտ կլինի անդրադառնալ վրացական ու հայկական արձանագրությունների լրիվ ուսումնասիրությունից ու հրապարակումից հետո:

Հաղբատի վանքի վրացական արձանագրությունների (ավելի ճիշտ՝ մակագրությունների) առկայության մասին խոսում է պրոֆ. Կ. Ղաֆադարյանը²³: Ս. Նշանի ավագ սեղանի պատիճ (ներքին ծածկ) պատկերված է Հայր Աստված «Արարիչ երկնի և երկրի» մակագրությամբ²⁴, իսկ Ե. Լալայանի մոտ՝ «Արարիչ երկնի եւ երկրի եւ... ընկալ... ի հաճոյս»²⁵: Տառերի հետքն այժմ հագիվ է նշմարվում: Դատելով ստորև բերվող մակագրություններից ու նույն վարպետի որմնանկար լինելուց, պետք է ենթադրել, որ նշյալ մակագրությունը եղել է նաև վրացերեն լեզվով: Մեզ չհաջողվեց որևէ հետք գտնել Ստորև բերում ենք այն, ինչ պահպանվել է.

22 Նրանց մասին մանրամասն տե՛ս Լ. Ս. Մելիքյանի «Ինքնակենսագրություն»-ը, Երևան, 1928.

23 «Հաղբատ», Երևան, 1963, էջ 155:

24 Անգ:

25 «Բորչալուի գավառ», էջ 397—398, նույնը հիմա. Բ. Ն. Երզնկյան, Հնախոս. տեղագրութ., «Արարատ», 1886, էջ 494:

Ա. Որմանակարի ավետարանի բաց էջին՝ վրացերեն (verso) և հայերեն (recto).

ՅԴ ԴԻ ԿՇԹԴԵՆ ԵԱ
ՓԵԴԵՇ. ԵԱ. ԳԴԹ
ՈՅՈՅԴԵԴԵՆ. ԵԴ.
ՇԵՇ. ԴԴԹԴԵԴԵՆ:
ՎԴԴԵԴԵՇ. ՇԵՇ:
ԵԴԴԵԴԵՆ. ՀԵԿԵԴ
ՎԵՇ. ԵՇՈԿԵԴԵՇ

ԵՍ ԵՄ ԼՈՅՍ Ա.
ՇԽԱՐՀԻ ՈՐ Ա.
ԹԻՍ ԸՆԴ ԽԱԻ
ԱՐ ՄԻ ԴԵԱՍՅ
Է ԱՅԼ ԸՆԴԱ.
ԼՅԻ ԶԿԵԱՆ
ՅԱԻԻՏԵՆԻՅ

Վրացերենն արդի գրչությանմբ՝

Յե ց(ս)ր նաեղևի սոթղևիս, ր(ս)ք Յեմոմոմիգլեց Յե առա շիլլեց
(resp. շիլլոց) Զեղևս. ա(րամե)ր յեթլեց ցեթլրեծաի սառլլեոռ.

Մականգրության հայերեն մասը հրատարակված է Կ. Ղաֆադարյանի հիշված աշխատության մեջ (էջ 154): Սակայն անհասկանալի է, թե ինչու միայն վերջին բառերն են ընթերցված («կալցի գկեանս յալտենից»), երբ, ինչպես համեմատությունից է երևում, մինչ այդ կան շորս և կես տողեր:

Բովանդակության առումով արձանագրությունը որևէ կարևոր բան չէ կրկնում է Հովհաննու Ավետարանի խոսքերը (Ը, 12): Հետաքրքիրն այն է, որ սույն քաղվածը նկատելիորեն այլ խմբագրություն է ներկայացնում²⁶: Այլ խմբագրություն է ներկայացնում և վրացերենը²⁷: Ուշագրավ է, որ մականգրությունների հայերենն ու վրացերենը կատարելապես համապատասխանում են միմյանց: Լեզվական որոշ իրողությունից (որ-ի դիմաց րաք) կարելի է եզրակացնել, որ նրանցից մեկը մյուսի թարգմանությունն է: Վրացերենի րաք-ը որ-ի միջին հայերեն նշանակության թարգմանությունն է, հետևաբար կարելի է եզրակացնել, որ վրացերենը թարգմանված է հայերենից: Վերջին պարագայի հետևանքով վրացերենում ունենք խոսակցական լեզվի (այն ժամանակվա) մի քանի արտացոլումներ սոթղևիս փխ. սոթղևիսք, Յեմոմոմիգլեց փխ. Յեմոմիգլեց, ցեթլրեծաի փխ. ցեթլրեծաք, սառլլեոռ փխ. սառլլեոռք.

Բ. Նույն տեղ. «աջ կողմում տաճարին ընծայելու տեսարանի տակին»:

ԵՇ

[Թաճար]և Յիլ(լ)լա

ՅԴԵԴԵՇ

Թարգմանություն.

Ընծայումն ի տաճարին²⁸:

²⁶ Սովորաբար՝ ես եմ լույս աշխարհի. որ զայ գկնի իմ՝ ընդ խաւար մի գնացել, այլ ընկալցի զլույսն կենաց (տես 1805, 1817, 1860, 1895 թվականների հրատարակություն): Նույնն է նաև Հազ. ավետ. էջ 191 Վ.

²⁷ Սովորաբար՝ Յե ց(ս)ր նաեղևի սոթղևիսք. ր(ս)ք Յեմոմիգլեց Յե առա շիլլեց Զեղևս, ա(րամե)ր յեթլեց նաեղևի ցեթլրեծաի (ԱԵ և Գ. Սուրբաբեղյու խմբ.): Ը-ի մեջ ունենք տարբերություններ՝ մոմեցլեց, Զեղևս առա շիլլեց, միլլեց (տես՝ չարտղու Ռոմեոյի Օրի ժեղևի ղեղալլու, ևսմի Յաթերղլու Եղևնալլու միջեղևի, Զամուցա յայլ Յանիլլե, տժ., 1945).

²⁸ Նույնի հայերենը հրատարակված է, տես Կ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., էջ 155:

Գ. «Նախորդի ձախ կողմում, Քրիստոսի ծննդի պատկերի տակին»:

ՊՐԾՆՁ.

ԿՐԿԼԵՃ

Թարգմանություն.

Մենունդ²⁹,

Վերոնշյալ երեք մակագրություններն էլ կատարված են նույն ձեռքով ու միաժամանակ: Թեև նրանք թվագրված չեն, այնուամենայնիվ կարելի է ճշտել դրության ժամանակը: Մասնագիտական գրականության մեջ նշվում է, որ ս. Նշանի ավագ սեղանի ծածկի պատերի վրա պահպանվել են երկու շերտ որմնանկարներ³⁰: Մեզ հետաքրքրող մակագրությունները պատկանում են վերին շերտին, որը «աներկբայորեն պատկանում է XIII դարի երկրորդ կեսին և, ամենայն հավանականությամբ, նկարված են խոթիու-Բուղայի կամ նրա վասալներից մեկի միջոցներով, որովհետև նույն տաճարի հարավային պատին, բավարար վիճակում պահպանվել է խոթիու-Բուղայի դիմանկարը, որ, իր կատարողական արվեստով և ներկերով, համընկնում է ավագ խորանի վերին շերտի որմնանկարներին»³¹: Այս միանգամայն ճիշտ դիտողությունից հետո պրոֆ. Կ. Ղաֆադարյանը հետևողական չի եղել և խոթիու-Բուղայի պատկերին առնթեր մակագրությունը թվագրել ԺԳ դար³², իսկ ավագ սեղանի ներքնածածկի պատի տեսարաններին (վերին շերտ)՝ ԺԱ դար³³: Ըիշտն այն է, որ մեզ հետաքրքրող մակագրությունները ժամանակակից են որմնանկարներին և, հետևաբար, պատկանում են XIII դարին:

Ն. Տոկարսկին, անդրադառնալով ս. Նշանի որմնանկարներին, գրում է. «Внутри ее кое-где сохранились остатки росписи на двух слоях штукатурки, покрывавшей чисто тесанную облицовку стен, что показывает, что монастырь довольно продолжительное время был в руках халкидонитов»³⁴.

Ն. Տոկարսկու այս կտրուկ եզրակացությունը իսկապես սպառնալից ավելի է և այդ առումով տեղին է պրոֆ. Կ. Ղաֆադարյանի ընդդիմադրությունը³⁵: Բայց վերջինիս մոտ էլ մի այլ ծայրահեղություն է. ս. Նշանի որմնանկարները, որքանով մեզ հայտնի է, իրենց ծավալով ու կշռով չեն նույնանում նրա թրվարկած այլ եկեղեցիների պատկերադարձումների հետ: Վերոբերյալ վրացական մակագրությունների առկայությունը կարելի է բացատրել եթե ոչ «երկար ժամանակ քաղկեդոնականների ձեռքում» լինելու հանգամանքով, ապա գոնե այդ դավանանքի նկատմամբ ցուցաբերված որոշակի հանդուրժողականությունամբ: Այստեղ զարմանալու ոչինչ չկա, որովհետև XIII դարի երկրորդ կեսին

²⁹ Հայերենը՝ Մենունդ Ք(րիստոս)ի (տե՛ս անդ):

³⁰ Н. М. Токарский, Архитектура древней Армении, Ереван, 1946, стр. 171, հմմ. նույնի Архитектура Армении в IV—XIV вв., Ереван, 1961, стр. 282—283, հմմտ. Կ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., էջ 19:

³¹ Կ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., էջ 19:

³² նշվ. աշխ., էջ 152, Տե՛ս նաև Ն. Մանի հրատ. Христианский Восток, 1912, т. I, вып. III, стр. 350—353.

³³ նշվ. աշխ., էջ 154:

³⁴ Н. М. Токарский, նշվ. աշխ., էջ 171, հմմ. նույնի Арх. Армении IV—XIV вв., էջ 282—283:

³⁵ նշվ. աշխ., էջ 19:

հայոց վարդապետների հյուսիսային դպրոցը, մասնավորապես Հաղբատ-Սանահին, այլևս նախկին կազմն ու հետևողականությունը չունենալով, նշանակությամբ ավելի ազդեցիկ էին դարձել նոր Գետիկի և խորանաշատի դպրոցները, սկսած XIII դարի առաջին կեսից՝ Ս. Նշանի վրացական մակադրությունները թերևս ավելի Ն. Տոկարսկու մտահանգման օգտին են խոսում, քան պրոֆ. Կ. Ղաֆադարյանի կտրուկ մերժման³⁶։

Գ. Հաղբատի Աստվածածին եկեղեցու մուտքի առաջ, հայերեն և վրացերեն լեզուներով գրված տապանագիր.

Ես Տաթևացու (sic) Յուդա մղեծարե զար շեղծուրի Մշտիսնոտելուդամ յեթմոտ ջամոսալմեծողն մե, սեքադիս մոտրացիս մեշողե քորոմսիմե. մեիլցելնո, ղեշեղրեծիտ ճինց Մուդիտեծոտ տիտո քիրի Մենցոծա միծծածոտ. ալմիսր[շլուրի Մլեսա 1812].

Թարգմանություն.

Այս տապանում եմ գտնվում կյանքից անժամանակ հեռացած դժբախտս ես՝ Հաղբատի մովրուլի ամուսին Հուդմսիմես. հանդիպողք, աղաչում եմ ով կարդա՝ մեկական բերան ողորմի ասեմ։ Վախճան(վեցի 1812 թվին)։

Տապանագրի վրացական մասը, աննշան տարբերությամբ, համապատասխանում է հայերեն տեքստին, որ այս է.

«Թ(վին) ՌՄԿԵ

եմ եղեալ յայսմ տապանիս Հոիփսիմէս ողորմելի է ամուսին բարէպաշտի տեղոյս մովրալ Մարտիրոսի. յանժամանակ կենս ելի տանեսց իմոց, սույ մեծ բողի։ Ուրի հանդիպիք այսմ արձանի ի մի բերան տուր ողորմի»։

Ծանոթություն.

1) Վրացերենի Հուդմսիմե-ն (գործածական Թիֆլիսի հայոց բարբառում) և հայ. Հոիփսիմեն տարբերակումներ են, և ոչ տառադարձման հետևանք. վրաց լեզուն ր գաղտնավանկ կազ-

36 Ի դեպ, Ն. Տոկարսկու եզրակացությունը միակը չէ. նրանից տարիներ առաջ ակադ. Ն. Մառը գրել է. «Любопытны факты, указывающие на возобладание в Ахпате за XIII в. если не халкедонитов, то халкедонитского приема в украшении церкви». См'у Н. М а р р, Ани, книжная история города..., Л.—М., 1934, стр. 132, прим. 280.

Ն. Տոկարսկին, հավանաբար, ծանոթ կլիներ Մառի այս դրույթին, թեև չի հղում։ Ինչպես Ն. Մառի ու Ն. Տոկարսկու, այնպես էլ վերջինիս առարկող պրոֆ. Կ. Ղաֆադարյանի ուշադրությունից վրիպել է մեր մատենագրության մեջ պահպանված մի հետաքրքիր վկայություն՝ Հաղբատի՝ քաղկեդոնականության հանդեպ ունեցած առնչության մասին։ Ներսիս Համբրոնացին իր «Թուղթ առ... Լևոն»-ում գրում է. «...իսկ ևս ունելով զՔրիստոս վասն իմ օր ըստ օրէ առաջի աստուծոյ հօր պատարագ, խափանեմ զնորա սպասաւորելն քահանայական սուրբ զգեստիք, և բացաւ զլիսով, և պաշտօնելից սպասաւորութեամբ, զոր հրամայեաց աստուած Մովսիսին զզգեստուցն կարգ, և Պաւղոս զբանալ զլիսոյն, և սուրբ հարքն զպաշտօնէիցն դաս. և հազնիմ զիշո՛ ուրպէս Հաղբատայ եպիսկոպոսն, և երկու յիգ կնկուղ վրացի սափուլայով, և պատարագեմ հաղբատեցի սև վիլոնով, և փակեմ զգլուտն ի վերայս, և ձգեմ զվարագոյրն, և անհաղո՛ւղ առնեմ զծողովուրդն յիւրեանց աստուծոյն քալիչ մահուանէն» (տե՛ս Ներսիսի Համբրոնացոյ Տարսոնի եպիսկոպոսի Ատենաբանութիւն և թուղթ և ճառք, Վենետիկ, 1865, էջ 217—218)։ «Հիւսիսային կողմանց» վարդապետներին վերաբերող այս փոխհանդիմանությունը, անկասկած, զերծ չէ որոշ չափազանցումից և նկատելի միտումնավոր է. ինչպես այդ երևում է մի երկու էջից հետո եկող նրա խոսքերից (անդ, էջ 223), բայց որ որևէ հիմք ունի՝ նույնպես կասկածից դուրս է։

մող ձայնավոր շունի, ուստի այն պետք է փոխարինենք ո, ա կամ ի-ով (ՀՄՄ. Մկրտիչ— ժոյոճ-
 Ծոյճ, եթե վրացական որևէ աղբյուրում իբրև հայկաբանություն գործածվեր հայ. վկա բառը,
 ապա գաղտնավանկ Բ-ի դիմաց կունենայինք վովկա, իսկ քանի որ վրաց լեզուն ու-ից առաջ Վ
 չի հանդուրժում՝ ովկա— յձձ: Ո-ի առնմանությամբ հայերենից փոխանցվելիս տեղի է ունե-
 ցել ի—ո հնչյունափոխություն: Նույն երևույթի արդյունք է և՛ փ—մ:

2) Հայերեն մասի էւ-ը, հնարավոր է, սոսկ վրիպակ է, բայց կարող է նաև տեղայնացված
 արտասանության հետևանք լինել, կամ վրացերենի աղղեցություն (վրացերենն ունի միայն է
 ժամանակակից արտասանությամբ):

3) Վրացերեն տապանագրի վերջին նախադասությունը անավարտ է մնացել տեղի սղության
 պատճառով: Լրացնում ենք ըստ հայերենի:

4) Տապանագիրը կարելի է տողատել*:

П. М. МУРАДЯН

ГРУЗИНСКАЯ ЭПИГРАФИКА В АРМЕНИИ

Р е з ю м е

На памятниках материальной культуры Армении сохранилось значительное количество грузиноязычных надписей, ценных как для истории Армении, так и Грузии. В большинстве они восходят к XII—XIII вв., т. е. к эпохе Захаридов и армяно-грузинских государственных образований. Часть надписей вызвана деятельностью халкедонитов-армян (т. е. армян грузинского вероисповедания).

Публикацией грузинской эпиграфики в Армении занимались многие ученые, как-то: мхитарист Н. Саркисян, академики М. Броссе, Н. Марр, И. Орбели, И. Джавахишвили, А. Шанидзе, Е. Такайшвили, С. Еремян, профессора Л. Меликсет-Бек и В. Дондуа.

Армяно-грузинская филология особенно обязана Н. Саркисяну, копировавшему десятки грузинских надписей, которые впоследствии были опубликованы им и акад. М. Броссе (1864 г.). Не будь этих публикаций, содержание некоторых впоследствии погибших надписей осталось бы неведомым для последующих поколений.

Поныне собраны, расшифрованы и опубликованы далеко не все грузинские надписи в Армении. Некоторые же из опубликованных нуждаются в существенных коррективах, в датировке по иным источникам, в раскрытии содержащихся в них сведений. Составление полного свода этих надписей ныне представляется актуальной задачей армяно-грузинской филологии, к чему и приступил автор предлагаемой статьи.

В настоящей статье публикуются грузинские надписи Хневанка (Հնեվանք), Санаина и Ахпата. По данным этих надписей автором ставится несколько вопросов:

1. Хневанк — памятник армянской архитектуры. Монастырь вторично был построен Сумбатом Орбели и является доказательством строи-

* 1965 թվականի հուլիս-օգոստոս ամիսներին Տաշիր-Ձորագետի հուշարձաններն ուսումնասիրելիս տողերիս հեղինակին էապես օժանդակեց ալավերդարնակ Կոստանդյանների ընտանիքը, մասնավորապես Դ. Մ. Կոստանդյանը, որի համար մեր շնորհակալությունն ենք հայտնում:

тельных работ князей Орбелян в 1123—1178 годах. Мсахурт-ухуцес Иваниэ Долгорукий (атабаг с 1212 г.) в годы патриаршества Феодора II (1186—1206) у монофизитов-армян отнял не только Плиндзаханк (Ах-талинский мон. св. Богородицы, построенный дочерью Кюрике II Мариам в 1188 г.), о котором говорится у Гандзакеци, но и Хневанк, когда и был пристроен южный притвор. Грузинские эпитафии свидетельствуют о грузинском вероисповедании армян-монахов, обитавших в Хневанке.

2. Иконопись верхнего слоя штукатурки ахпатской церкви св. Знамения (ურ. ზღაპრის) исполнена во второй половине XIII века, при жизни Хутлу-Буги. Изображение Отца и некоторые иллюстрации на евангельские темы, а также грузинские надписи на этих изображениях говорят о том, что монастырь значительное время (с 1205 г.) находился в руках монахов, благосклонно относящихся к халкедонитству, чем и вызвано наличие грузинских надписей. Сохранившаяся в Ахпате иконопись противоречит традициям армянской «национальной» церкви.

3. Грузинские надписи содержат интересные данные по вопросам истории грузинского языка, особенно в области передачи некоторых фонетических изменений в разговорной речи.